ըստ հաճոյից բոլորեցունց 'ի իւրաքանչ ամենայն գեղջէ այր մի ազգէն հայոց հաւատացելոց 'ի Քրիստոս աւանդութեամբն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ և ծնունդ հայաստանեաց հեզ և խոնարհ, 'ի այս ընտրողութենէ քանիցս այր որ ընտրեցեալ գտանի 'ի վերայ նոցայ, հանեսցեն վիճակս որ ելցէ միմիայն երկու այրս, որում երկու արանց որ ելցէ վիճակ բոլոր քեռֆխայք ամենայն գեղօրէից միաբան ձեռնադրելով թուղթ փոխանորդութեան տացեն ընդ առնն այնմ երկու անձանց 'ի ժամանակաւ երիս ամաւ, զի այս ընտրեալ երկուս այրս նստցեն 'ի յաթոռ տանն հայոց իշխանութեամբ և տանուտէրութեամբ, և կացցեն և մնասցեն փոխանորդ բոլոր երկոտասան հազար տանց, և սոցայ տեսանելով հրաման 'ի տանէն հայոց ձեռնադրեալ ընդ փոխանորդօք իւրեանց հնազանդելով կատարումն հասուցանեն ամենայն հրամանք տանէն հայոց և փոխանորդքս ստայցեն իւրաքանչ տանէ տարեկանաւ կէս դահեկան երծաթի, յամահաւասարութիւնն ըստ կարեաց տանց, զի այս վեց հազար դահեկանս հատուցումն լինիցի ծախ կարեաց երկու փոխանորդաց իւրեանց, զի նոքայ մնասցեն անհոգս 'ի ծախից, պահելով ժամանակս փոխանորդութեան իւրեանց ազատ առ 'ի խորհուրդ և գործ վասն բարութեան ժողովուրդեան իւրեանց, և յետ լրումն ժամանակին երիս ամաց